Անհնարինութիւնք մթութեանց .
Հալածեցոյց ախորժութիւնք .

Զարկ 'ի հոգինեաց , մաղթական գրչաց .
Զե՛ն ինձ բաւ 'ի սրտու յաղթանակ այս վրայ . . .
Ընդ անձաւ աշխարհ գրեթէ մի Երկինք .
Եւ գաղափարացն քոյդ ըղձանացս .
Մի ըղձանօքս հեծեծանաց
Մի անդրադարձ չիս 'ի բարձանց .

Մի՛ անհնարին արտասուք աղէտ .
Ո՛չ ըղձանօքս . մի՛ գթելով յանձն
Թողթափել կամիք ըղձիւր բարեկութեան .
Եւ որոց մեղաց հեծեծեր զոյր փոխան .
Մի՛ մի՛ Երկինք . մի՛ աւ իս .
Մի՛ անդրադարձ ըղձանօքս .

Բարէ՛ Թախծութեան ապաքինող սրտիս
Ո՛չ լսէն երկինք . ոչ երկիր զայնս
Ա՜հ . հեղձամղձուկ ձայնս ակնկալութ
Ընդ ձայնիւք ամպոցն հողոյ առանձնոյ .
Մխիթարեա՛ ինձ սրտագինք
Գոցցես մրմռոց իմս Ըմբռնած .

Արդ իմ՛ արտասուք մորեացին յոյսոյ .
Մինչեւ Արարիչն եկեալ առ իս յոյս .
Մինչեւ Գերագոյնն ընդ իս հաշտեցի .
Այս արտասուք իմ՛ զաղափարեալ .
Յաղթանակ ինձ որ գթութեան
Ծաղիկ սրտի խնդութեան .

Կ . Յ . Ե .

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Քաղաքիս հասարակաց Վսեմ. Նագլիֆ փաշայն եկած օրէն ի վեր կ'աշխատի մեծ բարեկարգութեան շաւղին մէջ մտցնել այն զեղծմունքները, որ արդէն մնացած են՝ ինչպէս ամէն տեղ, նոյնպէս և քաղաքիս մէջ նախորդ կառավարութեանց անհոգութենէն ։ Առաջին գործն է փողոցաց և շուկայից մաքրութիւնը հոգել . երկրորդ՝ գլխաւորապէս իւր ուշադրութիւնը դրած է , ուտելեաց և ուրիշ ապրելի վաճառաց գնահատութիւնը (նարխը) , որոյ համար յառաջ յանձնաժողով մի կազմեց մէկ մէկ արհեստաւոր մարդիկ ընտրելով իւրաքանչիւր արհեստէն , և նոյա յանձնեց վաճառականաց անուշաց հոգել , որ անուշատ ապէս իրենց պաշտօնը կատարեն . և եթէ չափոց և կշռոց մէջ խարդախութիւն և սպառեալ գնէն աւելի ծախողներ գտնէն , յանձնաժողովին տեղեկութիւնն անոնց տուգանքը որոշուի ։ Նմանապէս և պատուէր եղած է որ իւրաքանչիւր արհեստաւոր իւր արհեստին վերաբերեալ վաճառքէն ի պատ ուրիշ ցեղ տալանք չծախէ ։ Մենք գոհ եմք այս կարգադրութիւններէն , և առաւել գոհ պիտի լինիմք , եթէ արդիւնաւորուած տեսնեմք Վսեմ. կառավարչին բարեխնամ ջանքերը , արդարացի սպասելը առաջ կանոնաւորաց խնամաթսիններուն , որոնք լաւ գիտեն խաբել շուկայի տեսչաց անտարբերութիւնն և միտքը որ և է կերպիւ ։

— Այս միջոցին խիստ մեծ գործունէութիւն մի կը տեսնուի առյք Յարութեան տաճարի երկաթի նորաշէն գմբէթին նորոգութեան վերայ ։ Առաջին երկաթ շրջանակները (չէմպէր) զետեղուած են , և կը մնայ անոնց վերայ անցնել երկաթեղէն տախտակները և այս արձանել պատել . կը յուսացուի որ մէկ ամսէն բոլորովին կը լմննայ ։ Նորաշէն գմբէթը նախկինէն բարձրութեամբ խիստ աւելի բարձր ու հոյակապ դիրք մի պիտի ունենայ ։

— Կը փութամք նաեւ ուրախութեամբ աւետելու , որ ինչպէս արդէն գրած եմք Յոպպէի ճամբուն շինութեան գործը , մեծ գործունէութեամբ կը շարունակուի , և առյը քաղաքէս ընկրկանելով մինչեւ ի կիրճը՝ որ ըստ գործերուս մէջէ կ'անցնի և բաւ մեծի մասին քարուկայեր են , անընդհատ աշխատութեամբ կը բանուին , իւրաքանչիւր մասը իւր ժամակէս գիւղից ընակչաց յանձնելով ։ Այս օրինակ երարութեամբ տարակոյս չկայ , որ երկու ամիս չանցած՝ ամբողջ կը լմննայ ։ Այդէն ճամբորդներուն ուղեւորու-

digitised by A.R.A.R.@

թիւնը դիւրացուցած է․ և Նաւածով յետ այսրին վտանգներն և անհանգստութիւններն ևս անհետ ըլլալով․ բարեպաշտ ուխտաւորաց պատճառ չպիտի թողու․ թէ արեւելեան և թէ արեւմտեան քրիստոնէից․ իրենց սրտին հոգեւոր փափաքները կատարելու անարգել։ Նոյնպէս կը խօսուի, թէ բազմաթիւ Ռուսաստանցիք կը պատրաստուին կրօնական ճամբորդութիւն ընելու սուրբ քաղաքը, որոնց մէջ կան նշանաւոր և հարուստ անձինք։ Նոյնպէս և Յունաց ազգէն բազմաթիւ ուխտաւորաց գալստեան կը սպասուի։

— Անգղի ու Գերմանիոյ կողմերուն ապստամբութիւնը խաղաղեցաւ․ Շէխ Տամայ մեծահռչակ ապստամբին՝ որ ապստամբութեան գլուխն էր․ վերջապէս զգալով որ իր անտարբերութիւնը չպիտի կարէ ընդ երկար տեւել ընդդէմ հզօր Տէրութեան․ վերջը՝ և քանի մի երեւելի անձանց երաշխաւորութեամբ գնաց ի Դամասկոս առ Վսեմ. կուսակալն։ Կ՚ըսուի թէ մեծ պատուով ընդունուած է Նորին Վսեմութենէն, և թէ որոշուած է չորս հարիւր անկանոն զօրաց գնդապետ կարգել զինքը․ բայց այս վերջի լուրը դեռ ստուգութեան կարօտ է։

— Արաբացւոյ մի ասպնջականութիւնը։ Անցեալ ամսոյն մէջ Յորդանանու կողմերէն Շէխ մի ի Բեթլէհէմ կուգայ, և հոն Հայու մի տուն կը հիւրասիրուի․ եւ դառնալուն Ս՚ալեա․ այս է Հայուն անունը․ հետը կ՚ընկերանայ Շէխին մինչեւ իւր գեղը բնակարանը, և եւ դառնալու միջոցին իւր ձին կ՚իյնայ կը սատկի անակնկալ ցաւով մի․ և Շէխը իւր ընտիր սպասուցի նժոյգներէն մին իրեն կը պարգեւէ, որոյ արժողութիւնն հարիւր լիրայ է կ՚ըսուի։

— Արժ. Տիգրանեան Անդրանիկ վարդապետի վերայ գոհութիւններ կը լսեմք Զմիւռնիայէն, ուր Պոլսէն դառնալուն հանգչած է, և իւր ազգասիրական ընթացքին ու ցուցերուն այն առաքինեան գրաւած է ժողովրդեան բարեպաշտական ոգին․ որոնք փութացեր են ի նպաստ Զէյթունցւոց՝ բաց ի հարկաւոր ըրերէն՝ բաւական դրամական օգնութիւններ ևս ընել ունին։ Նոյն նպաստուոյ մէջ նշանաւոր է Զմիւռնիոյ երեւելի վաճառականներէն Թումանեան մահտեսի Յակոբ Աղայն որ մինակն առաւելագոյն կըզգալի․ այն բարեպաշտ անձը Զէյթունցւոց գաղթականաց յառաջադիմութեան համար քառասուն ոսկեան լիրա նուիրելէն յետոյ, խոստացած է ամէն տարի հատուցանելու նոյն գումարը։

Յիշեալ Արժ. Անդրանիկ վարդապետը ամսոյս 28ին հասաւ ի Ս. Աթոռս, յուխտ և յերկրպագութիւն Ս. Տեղեաց, ուր քանի մի օր մնալէն յետոյ պիտի վերադառնայ ի Զէյթուն։

## ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐ

Լոնտրայէն առ Սրբազան Պատրիարք Հայոց խրկուած թղթով ու Փէլ-Մէլ լրագրին մէջ կը կարդանք՝ թէ Գեր. Իսահակ Եպիսկոպոսը և իւր ընկերքը սիրով ընդուներ է Թէոդորոս կայսրը, և թէ նոցա միջնորդութիւնը յաջողելու վերայ է անգղիացի բանտարկելոց ազատութեան մասին։ Այս լուրս թղթի խմբագրութեան հանելով՝ կը խրատէ զանգղիացիքը, որ Թէոդորոս կայսեր անձնական պատուոյն դէմ ի գործ դրած բռնաբարութիւններէն ետ կենան և համբերեն մինչեւ որ կատարեալ յաջողի Հայոց նուիրակին միջնորդութիւնը։



digitised by A.R.A.R.@